

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ**

**«Հայաստանի Հանրապետության բնակչության
սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ
օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից
օրենքների նախագծերի, դրանց ամփոփաթերթերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի և կից ներկայացված ամփոփաթերթի ուսումնասիրության հիման վրա ստորև ներկայացնում ենք լրացուցիչ դիտարկումներ.

1. Ամփոփաթերթի 4-րդ նկատառումը վերաբերում է այն մտահոգությանը, թե արդյոք «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված կարանտին սահմանելու մասին որոշումն

ընդունած մարմինը լիազոր մարմնի առաջարկությամբ է կայացնելու կարանտին սահմանելու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում, թե նշվածը տեղի է ունենալու այլ ընթացակարգով:

Նշվածի կապակցությամբ Նախարարության պարզաբանումներում նշվում է, որ (...) առավել նպատակահարմար է կարանտին սահմանելու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտության կոլեգիալ քննարկումը, ինչպիսին հնարավոր է ապահովել ուղղակիորեն Կառավարության որոշման կայացման գործընթացի շրջանակներում, որի դեպքում բոլոր շահառու գերատեսչությունները հնարավորություն կունենան մասնակցել կարանտին սահմանելու մասին որոշման ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտության հարցի քննարկմանը:

Հարկ է նշել, որ նշված նախագծով կարանտին սահմանելու մասին որոշում ընդունելու սուբյեկտները Կառավարությունից բացի նաև մարզպետները և Երևանի քաղաքապետն են: Հետևաբար, եթե կարանտինը, օրինակ՝ սահմանվել է մարզպետի կամ Երևանի քաղաքապետի որոշմամբ, ապա այդ դեպքում կարանտին սահմանելու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու հարցը, ենթադրվում է, չի քննարկվելու Կառավարության նիստում, ինչին էլ հնարավորություն կունենային մասնակցելու բոլոր շահագրգիռ գերատեսչությունները (ամեն դեպքում նախագծում չկա որևէ նորմ, որը հնարավորություն տա Կառավարությանը ուժը կորցրած ճանաչելու կարանտին սահմանելու մասին՝ մարզպետի կամ Երևանի քաղաքապետի որոշումը):

Մյուս կողմից, մտահոգիչ է, որ Նախագիծը չի սահմանում համապատասխան կարգավորումներ այն իրավիճակների համար, երբ կարանտինն, օրինակ, սահմանվել է 6 ամսով, որի ընթացքում իրավիճակը բնականաբար անփոփոխ չի մնալու: Նման դեպքերում ի՞նչ ընթացակարգով է վերահսկվելու կարանտինային գոտում տիրող իրավիճակը, արդյոք որևէ կառույցի վրա պարտավորություն դրվելու է որոշակի հաճախականությամբ ուսումնասիրություններ անցկացնելու և ամփոփ տեղեկատվություն ներկայացնելու լիազոր մարմնին կարանտին սահմանելու հիմք տվող հանգամանքների վիճակի և զարգացման միտումների վերաբերյալ:

Սա կարևոր է հատկապես այն նորմի հաշվառմամբ, որը կարանտինը դադարելու հիմք է համարում *կարանտին սահմանելու հիմքերի վերացմամբ* պայմանավորված կարանտին սահմանելու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելը: Ուստի, անհրաժեշտ է նախատեսել այդ հիմքերի վերացված լինել-չլինելը պարզելու հստակ ընթացակարգեր:

2. Հաջորդ նկատառումը վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված այն մտահոգություններին, որոնց համաձայն՝ անձինք ինքնամեկուսացման մեջ գտնվելու պատճառով չեն կարողանում այցելել խանութ կամ տեխնիկական պատճառներից ելնելով չեն կարողանում պատվիրել սննդի առաքում: Առավել մտահոգիչ է նաև այն հարցը, որ անձն ինքնամեկուսացման պատճառով չաշխատելու արդյունքում չի կարողանում հոգալ իր և ընտանիքի անդամների նվազագույն կարիքները:

Նշվածի կապակցությամբ Նախարարության առարկություններում նշվել է, որ ի տարբերություն մեկուսացման դեպքերի, երբ գործ ունենք առավել խիստ սահմանափակող միջոցառման կիրառման հետ՝ *ինքնամեկուսացման պարագայում նման խստությունն առկա չէ*, ինչով էլ պայմանավորված է ինքնամեկուսացման դեպքում նշված կարգավորումները չամրագրելը:

Պետք է նկատել, որ ազատ տեղաշարժման և անձնական ազատության իրավունքների միջամտության տեսանկյունից թե՛ մեկուսացումը, և թե՛ ինքնամեկուսացումը նույնական են: Այսինքն, մեր նկատառման մեջ բարձրացված հարցի հիմքում ընկած են հենց ազատ տեղաշարժման սահմանափակումից բխող խնդիրները (սնունդ գնել չկարողանալը, չաշխատելը, որի անխուսափելի հետևանքն էլ ֆինանսական միջոցների բացակայությունն է և այլն):

Ուստի, շատ կարևոր է, որ ինքնամեկուսացման մեջ գտնվող անձանց սննդով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովելու՝ առնվազն հնարավորությունը նախատեսել օրենքի մակարդակով: Այսինքն, դա կարող է պարտադիր պահանջ չլինել բոլոր ինքնամեկուսացվածների և բոլոր դեպքերի համար:

Այն կարող է կիրառվել ըստ անհրաժեշտության, այսինքն՝ երբ ինքնամեկուսացվածն ունենա սննդի կարիք:

3.7-րդ նկատառումով առաջարկվել է սահմանել, որ կարանտին սահմանելու դեպքում միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել ոչ միայն Մարդու իրավունքների պաշտպանի, այլև նրա իրավասու ներկայացուցչի բնականոն գործունեությանը: Նշվածի կապակցությամբ վկայակոչվել է «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը և նշվել, որ դրանով սահմանված բոլոր մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են իրանց ներկայացուցիչների և աշխատակիցների միջոցով:

Հարկ է նշել, որ վկայակոչված հոդվածն ամրագրում է միայն ինստիտուցիոնալ երաշխիք՝ սահմանելով, որ արտակարգ դրության ժամանակ նույն հոդվածով նախատեսված միջոցառումների իրականացումը չի կարող խոչընդոտել (...) Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի բնականոն գործունեությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքներին առնչվող օրենսդրական դրույթների ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը որդեգրել է հենց օրենքի մակարդակում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեության ինստիտուցիոնալ երաշխիքների ամրագրման մոտեցումը՝ միաժամանակ երաշխիքներ նախատեսելով նաև Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների համար:

Պաշտպանի անկախությունն ու գործունեությանը չխոչընդոտելու երաշխիքն այլ կառույցների համեմատությամբ առանձնահատուկ բնույթ ունի, հետևաբար գործնականում որևէ տարակերպ մեկնաբանություն բացառելու նպատակով սկզբունքային ենք համարում օրենքով հստակ ամրագրել, որ կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել ոչ միայն

Մարդու իրավունքների պաշտպանի, այլև նրա իրավասու ներկայացուցչի բնականոն գործունեությանը:

4. Ամփոփաթերթում ներառված 15-րդ նկատառումը վերաբերում է կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում իրավասու մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի, գործողության (անգործության) վիճարկման վերաբերյալ գործերով բանավոր դատաքննությունը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ անցկացնելու հնարավորություն նախագծով նախատեսելու խնդրին, ինչի կապակցությամբ Նախարարության առարկություններում նշվել է, որ այն դեպքում, երբ բողոքարկման առարկա կլինի անձին մեկուսացնելու կամ ինքնամեկուսանալու վերաբերյալ լիազոր մարմնի հրահանգավորումները, որպիսի պայմաններում դիմողն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունենա անձամբ ներկայանալ դատական նիստերին, **նիստը կանցկացվի** գրավոր ընթացակարգի միջոցով:

Նախարարության նման առարկությունը մտահոգիչ է դատարանի անկախության ապահովման և արդարադատության պատշաճ իրականացման առումով, քանի որ նախագծով գործը բանավոր ընթացակարգով քննարկելու հարցը որոշելու իրավասությունը վերապահված է Վարչական դատարանին: Մինչդեռ, ներկայացված առարկությունից տպավորություն է ստեղծվում, որ արդեն նախապես որոշված է, որ անձին մեկուսացնելու կամ ինքնամեկուսանալու վերաբերյալ լիազոր մարմնի հրահանգավորումները վիճարկելիս վարչական դատարանը չպետք է գործի քննությունն իրականացնի բանավոր ընթացակարգով, անկախ նրանից, որ տվյալ գործը վարչական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը:

Մյուս կողմից՝ հարկ ենք համարում անդրադառնալ անձի լսված լինելու իրավունքին Սահմանադրական դատարանի 2012 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍԴՈ-1020

որոշմամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն այդ որոշմամբ դատաքննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու նախապայմաններ է սահմանել՝ արձանագրելով, որ գրավոր ընթացակարգով դատաքննությունն իրականացվում է առանձնահատուկ դեպքերում և որոշակի հանգամանքների առկայությամբ,

- երբ բացակայում է դատական գործով փաստական հանգամանքների բանավոր քննության անհրաժեշտությունը կամ, եթե դատարան ներկայացված նյութերի (փաստաթղթեր և այլն) բանավոր ուսումնասիրումը (քննությունը) վիճարկվող հարցի հետագա հստակեցմանը չի նպաստելու, և եթե այն չի հակասում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հանրաճանաչ սկզբունքներին,

- եթե դատարանն անհրաժեշտ է համարել որոշում կայացնել գործում առկա գրավոր փաստաթղթերի հիման վրա,

- եթե գործի հետ կապված հանգամանքների պարզումն այլ կերպ (բանավոր քննությամբ) անհնարին է,

- միայն իրավունքի կամ ընթացակարգային հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու անհրաժեշտության դեպքերում,

- եթե գործի քննությունը չի հանգեցնում որևէ փաստացի կամ իրավական հիմնախնդրի, և փաստերը հստակեցված են,

- եթե դատարանի որոշումը չի պարունակելու իրավական գնահատականներ,

- եթե դատարանում քննվող դիմումն անվերապահ հիմնավորված է կամ ակնհայտ անհիմն է, և դատարանը գտնում է, որ բանավոր քննության անհրաժեշտություն չկա:

Այսինքն, միայն այս չափանիշներին առկայության դեպքում կարող է արդարացված լինել կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում իրավասու մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի, գործողության (անգործության) վիճարկման վերաբերյալ գործերով դատաքննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելը:

Հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված՝ գործի հրապարակային քննության իրավունքն անհրաժեշտաբար ներառում է «բանավոր լսման» իրավունքը: Բանավոր քննության բացակայությունը կարող է համատեղելի լինել 6-րդ հոդվածի պահանջների հետ, երբ քննության ենթակա հարցը չի բարձրացնում փաստի կամ իրավունքի հետ կապված այնպիսի հարց, որը կարող է պատշաճ ձևով լուծվել գործի նյութերի հիման վրա՝ առանց կողմերի բանավոր դիտարկումների¹:

Սահմանադրական դատարանի 2019 թվականի ապրիլի 2-ի թիվ ՍԴՈ-1452 որոշման համաձայն՝ գործերի քննության բանավոր և գրավոր ընթացակարգերի կիրառումը կախված է ինչպես դատական ատյանի գործունեության, այնպես էլ **կոնկրետ գործի առանձնահատկություններից**:

Ուստի, ելնելով մեկուսացման կամ ինքնամեկուսացման վերաբերյալ լիազոր մարմնի հրահանգավորումների բողոքարկման գործերի առանձնահատկություններից՝ անհրաժեշտ է փարատել այն մտահոգությունը, թե արդյոք նման գործերով փաստական հանգամանքների բանավոր քննության անհրաժեշտություն չի լինելու, և արդյոք դատարան ներկայացված նյութերի ուսումնասիրությունը միայն բավարար կարող է համարվել դատարանի համար արդար և պատճառաբանված որոշում կայացնելու համար:

5. Վերոգրյալից բացի՝ հարկ ենք համարում նշել, որ օգոստոսի 26-ին ՀՀ առողջապահության նախարարություն և օգոստոսի 27-ին ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացված նկատառումների համեմատության արդյունքներով

¹ Տե՛ս Ֆրեդինն ընդդեմ Շվեդիայի (Fredin v. Sweden) գործով 1994 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 18928/91, կետ 21-22:

լրացուցիչ նկատարումներ են ներկայացվել վերջինով, որոնք, սակայն չեն ներառվել ամփոփաթերթում:

5.1 Մասնավորապես. ամփոփաթերթում ներառված 8-րդ նկատարումը լրացվել է հետևյալով.

- Լրամշակված նախագծով սահմանված այս կարգավորման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.9-րդ հոդվածի կարգավորումները, դրանց նման կերպ սահմանումը մի շարք հարցեր են առաջացնում: Էլեկտրոնային հատուկ ծրակրերի կամ էլեկտրոնային այլ եղանակով հսկողության իրականացման վերաբերյալ կարգավորումների նախագծից հանելն արդյո՞ք ենթադրում է անձնկան տվյալների պաշտպանության նման խնդրահարույց միջամտությունից հրաժարում, թե այն կարգավորում է ստանալու այլ նորմատիվ իրավական ակտով: Նման մտահոգությունը առաջանում է այն դիտարկմամբ, որ ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ անձի նկատմամբ ինքնամեկուսացումը կիրառվում է՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում Կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Արդյո՞ք ենթաօրենսդրական մակարդակում ինքնամեկուսացման կիրառման կարգը սահմանումը կարող է հետագայում ներառել նաև դրա ապահովելու նպատակով անձանց տվյալների փոխանցման խնդրահարույց էլեկտրոնային համակարգի ներդնում:

Բացի այդ, լրամշակված նախագծին կից ներկայացված հիմնավորումում ևս այդ հարցերին անդրադարձ չի կատարվել, թե էլեկտրոնային եղանակով հսկողության իրականացումը նախագծից հանելը և այն ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված

նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի անորոշ կարգավորումներով փոխարինելն ինչ նպատակ է ենթադրում և ինչ անդյունքներ է ակնկալում:

Հաշվի առնելով վերագրյալը, առաջարկում ենք ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամաշակված նախագծային լուծումները և դրանցով հետապնդվող նպատակը առավել հստակեցնել՝ ապահովելով անձնական տվյալների պաշտպանության երաշխավորումը:

5.2 Ներկայացվել է նաև նկատառում՝ կապված կարանտին սահմանելու ժամկետի հետ: Մասնավորապես.

- ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամաշակված նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարանտինը սահմանվում է *մինչև վեց ամիս ժամկետով*: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կարանտին սահմանելու հիմքերը չվերանալու դեպքում այն կարող է *երկարաձգվել մինչև 6 ամիս ժամկետով՝ պահպանելով կարանտին սահմանելու սույն օրենքով սահմանված կարգը*:

Նախագծերի նախորդ խմբագրությամբ տարբերակում սահմանված էր 2 ամիս ժամկետ: Կարանտինային սահմանափակումները միջամտում են մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին՝ հաշվի առնելով նաև դրանց շարունակականության հանգամանքը: Մինչդեռ նախագծին կից ներկայացված հիմնավորումները ևս չեն անդրադարձել ժամկետի փոփոխության հարցին և նպատակին, թե ինչու 2 ամիս ժամկետը փոխարինվում է 6 ամիս ժամկետով:

Հաշվի առնելով կարատինի ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը և դրանց իրականացման միջամտությունը՝

առաջարկում ենք քննարկել կարատինի ժամկետի սահմանման հարցը, ինչպես նաև պատշաճ հիմնավորել սահմանված ժամկետի նախատեսումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ